

ՄԵՐ ԶՈՂԵՐԸ

Հայ եկեղեցին ու հայ ժողովուրդը հսկայական կորուստներ արձանագրեցին 1915 թուականի եղեռնին:

2-500 եկեղեցիներ, վանքեր ու մատուռներ հրկիզուած, կործանած ու աներակ, մոխիրներու տակ մնացին Փոքր Ասիոյ մէջ: Սիւ, Աղքամար, Ս. Կարապետ, Վարագ, Նարեկ, Արմաշ գրկուեցան իրենց հաւատարիմ ուխտաւորներէն:

3-000 քահանաներ, 50 բարձրաստիճան եկեղեցականներ (վարդապետ ու եպիսկոպոս) կ'ողբար հայ Լուսաւորչական համայնքը:

Բողոքական համայնքէն 50ի չափ քարոզիչներ ու հոգեւոր հովիւներ զոհ կ'երթային աղէտին, անկարագրելի չարչարանքներով:

Հայ կաթողիկէ համայնքը կը կորսնցներ 9 եպիսկոպոս, 127 վարդապետ, 57 միանձնուհի:

Հայ մշակոյթը կը կորսնցներ 4-000 մտաւորական, հազարաւոր նուիրական յուշարձաններ, ձեռագիրներ:

Հայ ժողովուրդը՝ մէկուկէս միլիոնէ աւելի սիրելի զաւակներ:

* * *

Զոհերու քիւին մէջ Մխիթարեան Միաբանութիւնը կը խառնէր իր ընտրելագոյն անդամներէն չորս հոգի.

Հ. Ստեփան Վրդ. Սարեան, աստուածաբան ու գիտնական.

Հ. Կարապետ Տէր-Սահակեան, գրագէտ ու բանաստեղծ.

Հ. Պօղոս Գասպարեան, առաքել ու քարոզիչ.

Հ. Թովմաս Օտապաշեան, երիտասարդ նուիրեալ:

Ատոմ հասկեր, Ս. Ղազարու ցորեննոցէն, Յուլիսի բարկ արեւուն տակ՝ կ'իյնային անապատին մէջ:

Հասուն մտաւորականներ, արժէքաւոր հրատարակութիւններով, բանասիրական ու պատմական վաստակներով ծանրաբեռն, համալսարանական պատրաստութեամբ հմտացած, երիտասարդական կորովի խանդով լի, սեւաքուլ մագերով, մեր երկրի ոսկի արեւով հրավառ, կ'իյնային անապատին մէջ:

Ի՞նչ սուգ, ի՞նչ հարուած գարհուրելի՝ Մխիթարեան սակաւաբիւ Միաբանութեան համար. ի՞նչ կարկուտ սարսափելի՝ հայ մշակոյթին համար: Լացին սիրելիներ, լացին հարազատներ, լացին հոգեկիցներ, առանց կարենալու անոնց նուիրական անիւնները տեսնելու, անոնց բրտնոցն ու արիւնը սրբելու:

Տխուր օր մը, ամիսներ ետք, բօքը կը տարածուէր Ս. Ղազարու կամարներուն տակ. սահմուկած էին միաբանները խաղաղ լնակին, շատեր կուլային հեծեծագին...:

Կ'անհետանային նաեւ Մխիթարեան Միաբանութեան բազմամեայ գոհողութիւններով կերտուած յառաջադէմ վարժարաններ.

Քաղկեդոնի վարժարանը, հիմնուած 1870ին.

Նիկումիդիոյ նորաշէն դպրոցը, հիմնուած 1887ին, եկեղեցին ու առաջնորդարանը.

Պարտիզակի երկսեռ գոյգ դպրոցները, հիմնուած 1883ին, եկեղեցիով ու առաջնորդարանով.

Տրապիզոնի վարժարանը, հիմնուած 1817ին, Թոցի իր ամբարնոցով.

Մուշի եւ շրջակայ գիւղերու (Նորաշէն, Առինչ, Ողունք) երեք դպրոցները, հիմնուած 1892էն առիւն.

Մերտինի նորաբաց նախակրթարանը, բացուած 1912ին.

Խարբերդի նախակրթարանը, բացուած 1912ին:

Նիկումիդիոյ Մխիթարեան Հայրերը երկամեայ տառապանքներ կրեցին ախորի մէջ:

Պարտիզակի Հայրերը մինչև Նիկումիդիա ախորում՝ ազդու միջնորդութիւններու շնորհիւ միայն կրցան ազատիլ:

Հ. Աւետիք Գաղէգեան, Հ. Արսէն Ղազիկեան, Հ. Անտոն Զնտոյեան, Հ. Գարեգին Լազարեան, Հ. Եղուարդ Սիրունեան կրեցին տեղահանութեան ծանր արհաւիրքները:

Առ յաւէտ կորսուեցաւ Հ. Արսէն Ղազիկեանի «Մատենագիտութիւն»ը, Շ գիրէն մինչեւ վերջ:

* * *

Մուրատ-Ռափայէլեանի նախկին աշակերտներու ընտիր շարքերէն կը զոհուէին.

Դանիէլ Վարուժան, ծն. 1884

Արիս Խարայէլեան (Խարայէլ Տխրունի) ծն. 1885

Բարսեղ Շահպագ, ծն. 1883

Գեորգ Հիւրմիւզ, ծն. 1868

Արամ Սրապեան, ծն. 1878:

Յայտնի եւ անյայտ անուններ, որոնք կուտներն էին մեր մշակոյթի բազմին, նոյններու սուրբ անտառին քնարահարները նուիրական, որոնք կացի-նահաւր ինկան ի սէր մեր մշակոյթին ու կրօնին, անապատի բուրն ունեւանով լոկ լոկ ողբերգու իրենց բազմաչափ ռսկոյններուն:

Մուրատի եւ Ռափայէլի հոգիները սարստեցան ի տես այդ ահաւոր ողջակիզումին: Անոնց կտակը եւ դրօշակը նահատակներու արիւնով ներկուեցան ու դարձան սրբազան պատգամ բոլոր հայ սերունդներուն:

«Բաղձալէպ», այդ բոլորի նահատակութեան յիսնամեակին, անոնց անմահ յիշատակին կը ձօնէ իր տուրքը նուիրական, խոնարհելով անոնց անյայտ անիւններուն առջեւ: